րդ և 9.5-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով, գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվոր կողմից նախապես կատարվել է 80.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարում, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով Հայցվորի ներկայացուցչի՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու պահանջին՝ Դատարանն, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությունից, արձանագրում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, ուստի սույն պարագայում հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում, Դատարանը գտնում է, որ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար բռնագանձելու պահանջը նույնպես ենթակա է մերժման, ուստի այդը հարցը ևս պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<Ագաստ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<<Հրազդան>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի՝ 05.12.2023 թվականին կնքված թիվ ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/0101-6 ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու և <<<Հրազդան բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> թիվ 337 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am